



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Փ. ՌԱԴԿՈ

ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ  
ՎՈՐՈԳՈՒՄԸ



ԳՅԱՆՆԵՐԱԾ 1936 ԶԵՐԵՎԱՆ




Ա. Ֆ. ՊԵՂԿՈ

# ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ

## ՎՈՐՈԳՈՒՄԸ

A  $\frac{11}{23458}$  / 19621



## ԱՐԱՋՈՒԱՆ

Հայաստանի գաշտավարական մասում մթնոլորտային տեղումներ շատ քիչ են լինում, այն ել գլխավորապես ձմռանն ու վաղ դարնանը, իսկ ամբանն ու աշնանը տեղումներ դրեթե չեն լինում։ Այդ պատճառով ել այդ վայրերում առանց արհեստական վոռոգման վոչ մի կուլտուրական բույս մշակել չի կարելի։

Տվյալ վայրը վորքան բարձր ու լեռներին մոտիկ լինի, մթնոլորտային տեղումներ այնքան շատ կլինեն։ Այդ վայրերում արդեն առանց արհեստական վոռոգման կարելի յեցորեն, գարի, մինչև իսկ պտղատու ծառեր մշակել յերբեմն շատ քիչ ջուր տալով այդ հողերին։

Ամեն մի կոլտնտեսական ու մենատնտես շատ լավ պիտի, վոր այգուց լավ բերք կարելի յե ստանալ միայն այն ժամանակ, յեթե այգին լավ ջրվի։ Բայց բոլոր կուտնտեսականներն ու մենատնտեսները լավ չգիտեն, թե ի՞նք և ինչպես պետք է ջրել ալղին, վոր թե քանակապես և թե փորակապես բարձր բերք ստացվի, աշխատանք քիչ դորժադրվի ու միաժամանակ քիչ ջուր ծախսվի։

Մեր կոլտնտեսականներից ու մենատնտեսներից վոմանք ջուրը սխալ են ոգտագործում։ Այդին ավելի յեն վոռոգում, քան անհրաժեշտ եւ Առանձնապես այդպես են վարդում ջրի հետ այն տեղերում, ուր ջուր շատ կտ, ինչպես որինակ՝ Արաքսի, Հրազդանի, Ղարասուր գետերի ավագաններում։

Իսկ ավելորդ ջրելու վնասները շատ մեծ են։

Առաջին՝ ավելորդ տված ջուրը վոչ միայն չի նպատառում բերքի բարձրացմանը, այլ ընդհակառակը, իջեցնում

և այն, պակսեցնելով պտուղների քանակն ու գանդաղեցնելով հասունացումը Բացի այդ, բուլոր թուլլ և աճում ու զարգանում, ցրտերին ու սառնամանիքներին դժվարությամբ և դիմանում և պտղի վորակը վատանում է:

Յերկրորդ՝ ջրի անխնա ու ավելորդ գործադրումը մեծ մաս և հասցնում այն տնտեսություններին, վորոնք ընկած են վոռոգման ջրանցքի ստորին մասերում, վորովհետև նրանց բաժին ջուրը պակսում և ու այդպիսով իշնում նրանց այգիների բերքատվությունը:

Շատերը համախ պարզապես այդին ջրում են վոչ թե այն ժամանակ, յերբ այդ պետք և բույսին, այլ այն ժամանակ, յերբ ջուր կա: Վերջապես, շատերը չգիտեն, թե պտղատու կամ խաղողի այդի զցելու համար հողն ինչ ձեփով պետք է: Բաժանել մասերի և ինչպիսի մասերի, ինչ ժամկետներում ու ինչպես պիտի ջրել, վոր ավելի նպատակահարմար ու շահավետ լինի, ինչպես պիտի անել, վոր ջուրը հողի մեջ յերկար մնա ու այսպիսով ինալիի մեր գաշտերի համար այնքան անհրաժեշտ ջուրը:

Այս գրքույկի նպատակն է այդ հարցերը պարզաբանել, վորպեսզի ամեն մի կոլտնտեսական ու խորհանաեսության աշխատող, ոգտվելով այդ զիտելիքներից՝ հնարավորություն ունենա իր անտեսության վոռոգման խնդիրները լուծել համաձայն զիտության տվյալների և այդպիսով գործն ավելի կանոնավոր տանելով՝ շահավետ ու եֆեկտավոր դարձնել այն, թե իր տնտեսության և թե վաղջ ժողովրդական տնտեսության համար:

# 1.

## ՀՊԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԲԱՆՑՔՆԵՐԻ ՅԱՆՑԻ ՄԱՍԻՆ

Մեր գաշտերի վոռոգման ջուրը գետից ուղղակի դաշտերը չի հոսում: Մկղբում մեծ ջրանցքով և անցնում, այսուհետեւ բաժանվում եւ մանր ու մանրազույն մասերի ու հետո միայն արդեն փոքրիկ առվակներով հասնում եւ վոռոգվող դաշտերը: Մեծ ջրանցքները, վոր գետից են ակիղբ առնում ու մեծ քանակությամբ ջուր են տանում, կոչվում են մագիստրալ կամ գլխավոր ջրանցքներ:


Վոռոգելի վողջ տարածությունը կտրատվում ե մի շարք մանր մասերի, վորոնք առանձին ջրաբաշխիչներից են ջրվում:

Այդ ջրաբաշխիչից վոռոգվող տարածություններն իրենց հերթին բաժանվում են ավելի մանր մասերի, վորոնք առվաճյուղերից (զոլերից) են ջրվում, իսկ վերջիններու ել բաժանվում են ավելի մանր առվակների, վորոնք կոչվում են տնտեսական առվակներ:

Տնտեսական առվակներից ջուրը դաշտ և հասնում ջրաբաների միջոցով, վորաեղից արդեն այս կամ այն յեղանակով մանում ե ջրվող արտը:

Բացի վոռոգման ցանցից, կա նաև ջրհավաք ու ջրցեր ցանց: Ջրհավաք ցանցը գաշտից հավաքում ե ջրի ավելորդ ու սպասարկործված ջուրը և տանում նորից թափում ե գետը:

Յեմե ջրհավաք ցանց չկա, ավելորդ ջուրն ուր առես թափվում ելցվում ե ճանապարհներն ու արտերը, ճավաքվում ե փոս տեղերը, ճահճանում ու խեղդում այն:



Զրհավաք ցանց չունենալն առհասարակ վնասում և  
տնտեսությանը: Կանոնավոր գոռոգման համար պետք է  
ունենալ թե վոռոգիչ և թե ջրհավաք առուներ:

Ջրանցքների կառուցումը, դասավորումն ու կարգա-  
փորումը կատարում են Ջրանտեսության մարմինները:

Վոռոգման ցանցի դասավորումը գլխավորապես կախ-  
ված է վոռոգվող տարածության ուղղեցից—հողի մակե-  
րեսի կազմությունից (հարթ, լեռնոտ և այլն):


Ամեն մի կալանտեսական ու խորհանտեսության աշ-  
խատող, իր հողերը հետադայում կանոնավոր կերպով ոգ-  
տագործելու համար, պետք է հասկանա, թե վոռոգման  
ցանցի դասավորման համար ինչ հնարավոր ձևեր կան,  
վորպեսզի կարողանա իր հողերի մեջ մանր ու մանրա-  
գույն ցանցը կանոնավոր անցկացնել:

Յերկու հիմնական դեպք կարող են լինել:

1. Հանդիսա ուղյեֆ և տեղի միջն թեքություն (հո-  
ղի թեքությունը հորիզոնի նկատմամբ), ալսինքն՝  
յերբ թեքությունը յուրաքանչյուր հարյուր մետրի վրա  
տատանվում է 40-ից  
մինչև 90 սանտի-  
մետրի միջև:

Այս դեպքում վո-  
ռոգման մանր առու-  
ներն անց են կացվում  
թեքությանն ուղա-  
հայաց, իսկ ջրելու  
ակոսներն ու կու-  
տուրանների մշակու-  
մը՝ թեքության ուղ-  
գությամբ:

2. Անհանդիսա, ալի-  
քածե ուղյեֆ, տեղը  
մեծ թեքությունի



Նկ. № 2. Ակոսային ջրելու սիստեմ տեղի  
թեքության ուղղությամբ

(յուրաքանչյուր հարյուր մետրին թեքության տատանումը  
0,9—2,0 մետր):

Այս գեղքում տնտեսական տռվակները դասավորվում  
են թեքությանն ուղղահայց, իսկ ակոսները՝ թեքության  
ուղղությամբ: Մշակման բոլոր աշխատանքները (ջուր,  
կուլտիվացիա և այլն) կատարվում են թեքությանն ուղ-  
ղահայց:

Վոռոգման մանր ցանցի դասավորումն ինքնին նա-  
խորոշում ե ալս կամ այն պաղաքուծական տնտեսության  
հոգածասը կազմակերպող մոմենտները:

Պտղաբուծական անաեսության տերիտորիան պետք է  
բաժանվի արտադրական հողամասերի, իսկ վերջններս՝  
կվարանների (ավելի մանր մասերի): Այս բաժանումը  
պետք ե կատարել՝ տնտեսությունը կանոնավոր վարելու,  
արգին ճանապարհների հարմար ցանցով ապահովելու,  
տարբեր տեսակի ծառերն ըստ տռանձին սորտերի, ան-  
հրաժեշտ համակարգությամբ դասավորելու վոչ միայն  
ագրոտեխնիկական, կազմակերպչական տեսակետից,  
այլև արտադրական ալդ հողամասերին կոլանտեսականնե-  
րի մշտական կտզմ ամրացնելու համար:

Վոռոգող առուների ցանցի միջոցով պտղաբուծական  
անաեսության տերիտորիան բաժանվում ե զանազան մե-  
ծություն ունեցող մի շարք հողամասերի:

Տնտեսական առվակը 20 հեկտար տարածություն և  
ջրում: Այդ տարածության բոլոր աշխատանքները կապակ-  
ցըվում են վոռոգման հետ, վորը կարելի լի ընդունել վոր-  
պես այդու կվարտալի մեծության չափ: Հողամասի ալի-  
քաձև, կտրտված մակերես ունենալու գեղքում քարտի—  
կվարտալի մեծությունը կարելի լի ընդունել 10—15  
հեկտար:

Մի խումբ քարտ (անաեսական վոռոգիչներ) իրենց  
շափով ու ձեռվ, նայած տեղի ուղղեցին, միանալով մի  
առվագ, վորից իրենց ջուր և տրվում, կազմում են ջրոգ-

առագործման միավոր։ Այդ միավորի տարածությունը տառավում է 200—100 հեկտարի միջև և պտղաբուծական տնտեսության տերիտորիան կազմակերպելու պայմաններում՝ կարող է ընդունել վորպես արտադրական հողամասի մեծության չափ։ Ընդ վորում, յեթե ջրոգտագործման միավորի տարածությունը 200 հեկտարի յե հասնում, անհրաժեշտ է բաժանել յերկու արտադրական հողամասի, միացնելով համապատասխան թվով քարտ (տնտեսական վոռոգիչներ), վորովհետև պտղատու ալգու արտադրական հողամասը պետք է լինի մոտավորապես 100 հեկտար։

Արտադրական հողամասն ու կվարտալն սպասարկող գլխավոր ու յերկրորդական ճանապարհների անհրաժեշտ ցանցն անց ե կացվում համապատասխան վոռոգիչ առուների յերկարությամբ—արտադրական հողամասի համար՝ վոռոգչի, իսկ կվարտալի համար՝ քարտային վոռոգչի յերկարությամբ։

Այս սխեմաները տրված են՝ նկատի առնելով ճարտարագիտական վոռոգման պայմանները։ Տեղական սիումեմի գոյության դեպքում՝ յելակետ պետք է ունենալ գոյություն ունեցող պալմանները։

Ինչպես ասացինք, հիմնական վոռոգիչ ջրանցքները, մինչև իսկ տնտեսական առուները, ջրալին տնտեսության ժարմիններն են կառուցում։

Մանր ու մանրագույն ցանցը—վոռոգիչ առվակները ջրող ակունները և այն կառուցում են իրենք՝ տնտեսությունները։ Այդ փոքրիկ ջրանցքների կառուցման մեթոդն այնքան պարզ ու հասարակ է, վոր կիրառելու համար առանձին մեծ գիտություն չի պահանջվում և ծանոթ ե գրեթե ամեն մի կողմնահասականի ու խորհունտեսության աշխատողի։ Այսպես՝ վոռոգող առուները գութանով են հանգում, յերկու անդամ միենալին հետքով վարելու միջոցով, ըստ վորում հողը շուռ և տրվում թե աջ և թե ձախ ապա ձեռքի բահով մաքրում են այդ ակունների միջի հողն

ու ստանում առու։ Այդ ակոսների ուղղությունը լինում է հաղամասի թեքության ուղղությամբ կամ նրան ուղղահայց, նայած տեղի ուղեգին։ Առուների լայնությունը հատակից պետք է լինի 30 սանտիմետրից վոչ պակաս, իսկ խորությունը՝ մինչև 40—45 սանտիմետր։ Ակոսները սպորական գութանով են գցվում, ինչպես և տրակտորային կամ ձիու մարկլորով։

Ակոսներ գցելու մասին ավելի մանրամասն առաջքութիւն «Ակոսացին վոռոգում» զրուխը։

Թմբերը (վողողման միջոցով, սովորական ձևով վասդելու դեպքում) շինվում են ձեռքի մարդոցով, կամ տրակտորվ բանող ոփջեր կոչվող գործիքով։


Ռիջերը կազմված են կեռածալը մետաղյա լերկու ձևից, վոր հատուկ ձղիչներով այնպես են ամրացվում իրար վոր առջեկի կողմը լայն լինի, իսկ յետեվի կողմը՝ նեղ։ Ռիջերը տրակտորին միացնելու համար ձողերի վրա առնելից կամ կողքերից ողակներ կան։ Ռիջերն աշխատելիությունի լայն կողմով վերցնում են նախորոք վիսրացրած հողը, իսկ յետեկի նեղ մասով մամլում նույն հողն ու այսպիսով հողի թմբեր շինում։ Այդ ոփջերները շատ տեսակի լին լինում՝ սկսած փայտե, ամենաապարզ կազմություն ունեցողից մինչև մետաղե ամենաբարդ ոփջերներ։ Ռիջերը պետք են բանեցնել միայն նախորոք վիսրեցրած հողում։ Այս կարելի յե գործադրել նաև միջակ ու ծանր հողերում, բացի խիստ խճուտ հողերից։

Թե ակոսներն ինչպես պետք են գցվեն, նրանց ինչ ուղղություն պետք են տրվի և այս կապակցությամբ ինչպես պետք են դասավորվեն այդու շարքերը, այդ մասին շատերը չպիտեն։ Անա հենց այդ մասին ել կլինի առաջիկայում մեր խոսքը, արտինքն՝ այս կամ այն պալմաններում պաղատու արդի գցելու վո՞ր յեղանակն են պելի լավ, պելի նպատակահարմար են համապատասխան տվյալ վայրին, ի՞նչպես պետք են դասավորվի ջրանցքի մանրագույն ցանցը կամ, ինչպես ասում են, գոռոգման վո՞ր յեղանակը պետք են ընտրվի։

## 2.

### ՊՏՂԱՑՈՒ ԱՅԴԻ ԳՅԵԼԸ

Հայտնի լեն այդի զցելու յերեք հիմնական լեղանակ՝ քառակուսի, ուղղանկյուն և շախմատաձև:



Նկ. № 3

Այս լեղանակները կարելի յե կիրառել այն դեպքում միայն, յերբ տեղի թեքությունը հնարավորություն ետալիս ալլին թեքության ուղղությամբ վոռոգել (այսինքն՝ ակոսով ջուրը բաց թողնելիս արագ չհոսի և ճանապարհին ամեն ինչ հեղեղի, այլ հանդարտ հոսի ու ծծվի հողի մեջ).

Այդի զցելու ալլ յերեք լեղանակների համար ել համաձանքարարում ե գործադրել այն ընդհանուր սխեման, վորցուց ե տրված Ն 1 նկարում:

Իսկ յերբ թեքությունը մեծ ե, հողի մակերեսը (ունեֆը)՝ կարատված, ապա կանոնավոր վոռոգման համար ալլի զցելու ալլ յերեք լեղանակն ել անպետք են, վարովինետե ալլ թեքությամբ այդին ջրելիս ջուրն ալզուտ ողուտ չի տա, հողի յերեսից արագ կհոսի, առանց թա-

փանցելու հողի մեջ և միայն իր անցած ճանապարհը կհեղիս: Ուստի և այսպիսի գեպքում այդին պետք ե զցել թեքությանն ուղղահայաց՝ հարմարեցնելով հողամասի մակերեսի կազմության (ռելեֆի) փոփոխություններին: Ծառաշարքերի թեքությունը կախված կլինի վոռողման համար նախատեսված լեղանակից (այդ մասին ստորև):

Այդի զցելու այս յեղանակը կոչվում ե ռոելլեֆային», կամ, ինչպես ասում են՝ այդին պետք ե զցել ըստ տեղի հորիզոնականների: Այս յեղանակը պետք ե կիրառել № 2 նկարում ցույց տված ցանցի ընդհանուր սխեմայով:

Այս դեպքում ալիքին զցվում ե հետեւալ կերպ:


Նախ՝ թեքությանն ուղղահայաց հողամասի սահմաններում, նրա ամենալրարժը պատճեն մասում, բաշխիչ ջրանցքից վոչ հեռու վերահսկիչ մի զիծ են քաղում: Այնուհետեւ այդ վերահսկիչ զծի վաղջ լերկարությամբ, իրարից վորոշ տարածությամբ, վորն ընդունված ե ծառեր (դեղձի, ծիրանի և այլն) տնկելու համար, ցցեր են խփում և ուսպիսով նշում ապագա ծառաշարքի սկիզբը:

Այդ յեղակետերից սկսում են զարիվարի լանջին ծառաշարքեր զցել՝ միշտ հարմարվելով տեղի մակերեսի կաղմությանը (ռելեֆին) ու ծառաշարքերին տալով վորոշման համար նախորոք վորոշված թեքությունը (այդ մասին ստորև):

Այս աշխատանքը հեշտացնելու համար կարելի յետքովել հետեւալ պարզ ու հասարակ զործիքից, վորը կազմված ե փայտի մի ձողից ու նրան ուղղանկյուն անրացքած լերկու վոտքից, վորոնցից մեկը (շարժականը) մյուսից յերկար ե: Զողի ու յերկար վոտքի յերկարությունը հեշտությամբ կարելի յե փոփոխել՝ շարժական վոտքը ներս ու դուրս քաշելով:

Աշխատանքից առաջ այդ ձողը զնում են վորոշ լերկարության վրա, նայած թե անկվելիք ծառերի համար մեկը

մյուսից ինչ հեռավորություն ե ընդունված: Յերկար վոաքը (C), վորի վրա նշված են բաժանումներ, շարժում և գնում են այնպես, վոր մյուս վոտքից այնքան յերկար լինի, վորքան ուղղում են թեքություն տալ ապագա տըն-



Նկ. № 4

կիներին: Յենթադրենք՝ այդ գործիքի միջոցով այգին ոելյեֆի համապատասխան պետք ե գցենք (ապագա այգին լինելու լե դեղձի): Այս գիծը, վորից պետք ե սկսենք այգին գցել, տեղում արդեն զծված ե (բախչիչ-կարգավորիչ առու և այլն): Ծառաշարքերի թեքման չափը վորոշված ե, լինթադրենք 0,005 սատիման (100 մետրին—50 սանտիմետր)

Դաշտ գալով՝ աշխատանքից առաջ, ինչպես պետք ե, ըստ տվյալների գործիքը սարքում ենք:

Յենթադրենք այսպիսի մի առաջադրանք ունենք. ապագա դեղձենիների հեռավորությունը մեկ-մեկից պետք ե լինի 6 մետր, ծառաշարքի թեքությունը՝ 0,005 (100 մետրին  $\frac{1}{2}$  մետր, կամ 50 սանտիմետր), վորպեսզի հնարավոր լինի վոռոգումն ակոսներով կտարբել:

Այս առաջադրանքի համապատասխան, դեղձի այգի գցելու համար գործիքի «Ա» հորիզոնական ձողը դնում ենք այն տարածության վրա, վոր վորոշված ե թողնել ապագա ծառերի միջև, այսինքն՝ ավալ դեպքում 6 մետրի վրա, այսպիսով՝ հորիզոնական ձողի յերկարությունն այս աշխատանքի ժամանակ կլինի 6 մետր:

Այնուհետև գործիքը մեղ առաջադրված թեքության համապատասխան սարքելու համար կդիմենք գրկույքիս վերաբերմ տրված աղյուսակի ոգնության։ Աղյուսակի առաջին պրունակում, ձախ կողմից, կգտնենք մեղ տրված թեքությունը՝ 0,5 մետր 100 մետրին։ Այս շարքով առաջ գնալով՝ 6 թվանշանի տակ (վորը ցուց ե տալիս ծառերի միջեւ և պահած տարածությունը) կդտնենք 3 թվանշանը։ Հենց այդ ել կլինի ծառերի թեքության չափը յուրաքանչուր 6 մետրի վրա։ Այդ թեքությունն արտահայտված ե սանտիմետրերով։ Ուրեմն՝ աղյուսակից մենք տեսանք, վոր ծառերի միջեւ 6 մետր տարածություն թողնելու դեպքում, մի ծառի թեքությունը մրուսի նկատմամբ 3 սանտիմետր պետք ե լինի։

Յեթև թեքությունն ընդունենք 100 մետրին վոչ թե 0,5 մետր, այլ ավելի, որինակ՝ 0,9 մետր, դարձնալ նույն աղյուսակի ձախ սյունակում կգտնենք 0,9 թվանշանը։ շարքով կդնանք մինչև 6 թվանշանը և կդտնենք 5,4 սանտիմետր։

Ստացված թեքության համապատասխան, տվյալ դեպքում 3 սանտիմետրի վրա կդնենք գործիքի շարժվող վուրք («C») և կամրացնենք։

Այս բոլորից հետո, գործիքն արդեն սարք ու պատրաստ կլինի աշխատանքի համար։ Նրա փոքր վոտը դնում ենք վերահսկիչ գծի առաջին ցցի տեղը, իսկ մեծ վոտը՝ այնտեղ, ուր հիմնական ձողն ընկած կլինի հորիզոնական դիրքով։ Ձողի հորիզոնական լինելն ամեն անգամ ստուգվում է հարթաշափով։ Այնտեղ, ուր ձողը հորիզոնական դիրք կունենա, նշում են գետնին հավասար խփվող ցցով և հենց այնտեղ ել հետագայում ծառեր են տնկում։

Այնուհետև գործիքի կարճ վոտքը փոխադրում են այնտեղ, ուր մինչ այդ կանգնած եր լերկար վոտքն ու վերջինիս միջոցով դարձյալ նշում հետերալ ծառի տեղը։

Ծառաշարքի լերկարությունն ամբողջ տարածության  
վրա յերբեք չի կարող մեկը մյուսին հավասար շարունակ-  
վել, Այդ շարքերը կամ կիսանան, կամ ցրիվ կգան, նա-  
յած թե ինչպես ե փոփոխվում հողամասի թեքությունը:  
Դրանից խուսափելու համար՝ ծառաշարքերի թեքությունը  
պետք ե փոխել (փոքրացնել կամ մեծացնել). կամ, յեթե  
կարիք կա, ծառաշարքն ընդհատել ու նորն սկսել (յեթե  
ժառերն իրարից շատ են հեռանում):

Այս լեզանակով այդի գցելիս ուշիուշով պետք ե հե-  
ռևել ծառաշարքերի նշվող ուրվագծին և լեթե այդ ուրվա-  
գիծն ընդունված պայմաններին չի համապատասխանում,  
անմիջապես պետք ե ուղղումներ մտցնել:

Թեք տարածության վրա այդի գցելու այս լեզանա-  
կը պետք է կիրառել բացառապես այդ տարածության  
վրա տնկվելիք ծառերի կանոնավոր վոռոգման պայման-  
ները նկատի առնելով միայն, թեպետ այդի խնամելու  
աշխատանքները մեքենայացնելու տեսակետից այդ լեզա-  
նակն այնքան ել լավ չե:

---

## 3.

## ՎՈՌՈԳՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻ

Հայաստանի պարմաններում ալգիները ջրելիս ոգ-  
արվում են վոռոգման զանազան յեղանակներով:

Վոռոգման յեղանակն ընտրելիս մի շարք լուրջ հան-  
գամանքներ պետք են նկատի առնել, այն և՝ վոռոգվող  
աարածության հողային պայմանները, նրա մակերեսի  
կազմությունը (ռելլեֆալին պայմանները), առագա կուլ-  
տուրայի բնույթը և այլն։ Առանձնապես ուշադրություն  
պետք են դարձնել հողամասի՝ ջրի նկատմամբ ունեցած  
հատկությունների վրա։

Հողերը կոպիտ կերպով կարելի յերաժանել յերեք  
տեսակի՝ թեթև, ծանր և միջակ։

Թեթև հողը հեշտությամբ է ջուր ծծում, փորը հողի  
յերեսից ավելի հեշտությամբ է թափանցում հողի ցածի  
շերտերը, քան դեպի նրա կողքերը (այսինքն՝ ինչպես մաս-  
նագետներն են ասում՝ կապիլյար հատկությունները նրա  
մեջ թույլ են արտահայտված)։

Այդպիսի հողերի համար ավելի լավ են վոռոգման  
այնպիսի յեղանակ՝ ընտրել լեռք ջուրը վերևից ներքեւ և  
ծծվում հողի մեջ (ճնշման առակ), որինակ՝ ջուր բաց  
թողնելու վորողման յեղանակը։

Ծանր հողերի վոռոգման համար կիրառում են վոռոգ-  
ման ակոսային յեղանակ, վորովհետև ծանր հողերում ջուրը  
դեպի կողքերը լավ է ծծվում, իսկ վերևից ներքեւ դժվար  
ու շատ դանդաղ է թափանցում։

Այգիներ գցելիս վոռոգման շատ ձեեր են կիրա-  
ռում (վորողում, շերտային, ակոսային և այլն)։

Մարգաջուրը տարածված ե Համարլիք, Վեդու և այլ շրջաններում։ Այս ձեփի վոռոգում կիրառվում ե թե մատղաշ և թե հին այզիներում։

Այս վոռոգման եյությունը հետևյալն է։ Վոռոգի տարածության վրա մարգոցով թմբեր նն քաշում ու մարգակերի բաժանում, վորոնց թերկարությունը՝ 40—80 մետր ե լինում, իսկ լայնությունը՝ 3—5 մետր։ Մարգերի լայնությունը կախում ունի հողի հատկությունից։

Ծանր հողերի մարգերը նեղ են անում, իսկ թեթև հողերինը՝ լայն, վորովիետե ծանր հողերին բարակ ջուր են տալիս, իսկ թեթև հողերին՝ առատ։

Զուրը միանգամից մի կամ մի քանի մարգերի վրա լին բաց թողնում։ Զուրը տալիս են՝  $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$  բաշ։

Մարգաջուրը տալու ժամանակ ջուրը հողի մեջ պիտի ծծվի այնքան, քանի զեռ մարգի միջով հոսում է։ Այս յեղանակով ջրելն այն զեպքում կարող ե իր նպատակին հասնել, յեթե թեթև հողեր են ջրվում, վորոնք, ինչպես ասացինք, ոժուված են ջուրը վերեկից ներքեւ հեշտությամբ ու համահավասար ծծելու հատկությամբ։

Մարգաջուրը հետևյալ դրական կողմերն ունի.

1. վոռոգման համար հողը պատրաստելու վրա ավելի քիչ աշխատանք ե պահանջում, քան, որինակ՝ ակոսային յեղանակով ջրելիս։

2. մի հեկտարի վոռոգում ավելի կարճ ժամանակ և պահանջում, քան ակոսային վոռոգումը։

3. հնարավոր ե կիրառել համեմատաբար ավելի մեծ թեքություն ունեցող հողերում։

4. լավ արդյունք ե տալիս, յերբ թեթև հողերում ե կիրառվում։

Սակայն վոռոգման այս յեղանակի կիրառումը մեր այզիներում, պիտի ավագորապես մատղաշ արդիներում, մեր նոր արդիների մշակման համար նախագծվող հողերում, որինակ՝ Դռերի, թաղաղյուղի տնտեսության և այլ հողերում։

լավ արդյունք չի տալիս, ուստի պետք եւ փոխարինել վոռոգման մի այլ յեղանակով:

Վոռոգման այս յեղանակն անհրաժեշտորեն պետք եւ փոխարինել մի այլ յեղանակով, վորովհետև մեր ապագա այլեւգործական շրջանների հողը (ինչպես և զոյտ թյուն ունեցող այդիների հողերը) միջին և ծանր տեսակի հող ե, իսկ այդպիսի հողի վերաբերմամբ վոռոգման այդ յեղանակը ցանկալի է ֆեկտ չի տալիս, վորովհետև ջուրը հողի անցքերը տիրմ լցնելով՝ հողի վերեսից անտեղի լի հոսում, առանց թափանցելու հողի խոր ջերտերը՝ և առանց անհրաժեշտ նֆեկտ տալու:

Բացի այդ, վոռոգման այս յեղանակն ուղիշ բացառական կողմեր ել ունի, այն ե.

1) այս յեղանակով վոռոգելիս տեղի յեռ ունենում ջրի ուժեղ գոլորշիացում, հետևապես՝ և ջրի անտնտեսավար ծախսում.

2) ծանր հողերում բույսերը բավարար չափով խռովություն չեն ստանում.

3) վոռոգելու համար ավելի մեծ քանակությամբ ջուր և պահանջվում, քան վոռոգման մյուս յեղանակները կիրառելիս, որինակ՝ ակոսացն վոռոգման դեպքում: Ուստի այս յեղակալով վոռոգելիս նույն քանակությամբ ջուր դորձադրելով՝ բերքն ավելի քիչ ե ստացված:

4) մատղաշ այգիներն այս յեղանակով վոռոգելիս՝ ահապին քանակությամբ ջուր անոգուտ կորչում ե:

Նկատի ունենալով այս անենը՝ մեր այգիների վոռոգման այս յեղանակը (մարգածուր տալու յեղանակը) պետք ե փոխարինել մի ուրիշ, ավելի լավ, ջուրը անտեսող ու ավելի մեծ արդյունք տվող յեղանակով:


Հայտատանի պարմաններում, առանձնապես ցածրադիր վայրերում (բողահող և նըա փոփոխակները) մենք հանձնարարում ենք այգիները վոռոգելու համար կիրառել վոռոգման ակոսային յեղանակը, առանց քննության առնե-

զու վոռողման յեղանակով վոռոգելու ձևը, քանի վոր մեր տիգեցործական շրջաններում այդ ձեի վոռողման համապատասխանող ուղղեթ ունեցող հողեր չկան, բացի այդ, նկատի պետք ե առնել վոռողման այդ յեղանակի վոչ ուղիոնալ լինելը՝ սոցիալիստական պաղաբուծական տնտեսության բնագավառում:

### Վոռողման տեսային յեղանակը


Վոռողման այս յեղանակը համարվում է համեմատաշար ավելի կատարելագործված և այժմ ավելի տարածված ձևը: Ակոսային վոռողման ելությունն այն ե, վոր ջուրը հողի մեջ կողքից և ծծվում հոսելով այն ակոսաերով, վորոնք անց են կացվում ծառաշարքերի միջև: Այդ ակոսները գութանով են գցվում, ծառաշարքերին գուգահեռ: Նրանց թիվը կախված է ծառերի հասակից, ծառաշարքերի միջև յեղած տարածությունից ու հողի բընույթից:

Նոր գցած՝ 2—3 տարեկան այդում բավական է ծառաշարքի յերկու կողմից յերկուական ակոս գցելը: Այդ ակոսներն անց են կացվում ծառերից կես մետր հեռու: Յերբ ակոսների թիվը մեծացնում են, ակոսների միջև յեղած տարածությունը պետք է լինի  $0,5—0,6$  մետր, այսինքն՝ 50 սանտիմետրից մինչև 60 սանտիմետր:



ծառաշարքում ակոսներ օգնություն կտան

Այդ գեպքում՝ մատղաշ ծառերին համար, վորոնց արմատները գեռ ըիչ են զարդացած ու իրենց ճյուղավորությամբ այնքան ել հեռու չեն տարածված, հիշյալ ակոսները միայն այդ ծառերը ջրելու համար միանգամայն բավական են։ Սակայն այդու զարգացման սկզբնական շրջանում—առաջին յերեք տարին—հողի վողջ տա-



Նկ. № 6. Ակոսներ գերելու մարդկութ

րածությունն ողտագործելու համար, անհրաժեշտ է անպայման մեր կոլտնտեսային պրակտիկայի մեջ բան-ջարեղենի, հատապտուղների ու խռտաբույսերի ցանք մտցնել ծառերի միջ-շարքային գատարել տարածության վրա։


Այդ նպատակի համար պետք եւ ընտրել անսպիսի կուլտուրաներ, վորոնց զարդացումը քիչ վուզում և քիչ ջուր եւ պահանջում։ Այս առթիվ պետք եւ խորհրդակցել դյուղատնտեսի հետ։

Յերբ միջարքային տարածության վրա կողմնակի բուլսեր են ցանվում, նրանց վուզում համար անց են կացվում լրացուցիչ ակոսներ կամ շարքեր (նաև ած կուլտուրային)։

Միջանկյալ կուլտուրաներից մերձքաղաքային շրջաններում առավելություն պետք եւ տալ գլխավորապես հատապտուղներին։

Այդին զցելու յերրորդ տարուց սկսած, յերբ ծառերն արդեն զարդացած են լինում, անհրաժեշտ է վուզում ակոսների թիվը ավելացնել ու այդ ակոսներով ծածկել միջարքային վողջ տարածությունը, վորովինետեւ այդ ժամանակ ծառերն արդեն բավական աճած կլինեն, նրանց

արմտաները խիստ զարգացած ու տարածված, հետևապես,  
այն ակասները, վորոնցով մատղաշ ծառերը վոռոգվում



Նկ. № 7.

Այլին, ալժմ այլնս չեն կարող բավարարել նրանց պահանջը

Այգու ընդհանուր տեսքը՝ ակոսային  
լեղանակով փռող ելիս

Այգում ակասներ գցելու աշխատանքը պետք է կատարել ակասնապես մեղքենայացնել: Դրա համար գործածվում է արակտորային ուժով աշխատող մի հատուկ գործիք, վոր «մարկոր» և կոչվում ու միանգամից 4—5 ակաս է գցում: Ակասները գցվում են նաև գութանով, բուգլիցով ու այլ գործիքներով:

Ակասների հեռախորությունը միմյանցից կախված է հողից: Կավախառն հողերում այդ տարածությունը պետք է լինի 60—70 սանտիմետր, կավալին հողերում՝ 70—80 սանտ. և ավագախառն հողերում՝ 40—60 սանտիմետր:

Ակասի լերկարությունը թեթև հողերում, ուր հոսելու ժամանակ ջուրն արագ կերպով ծծվում է հողի մեջ, 50—60

մետրից ավելի չպիտի լինի, միջին հողերում՝ 60—100 մետր, իսկ ծանր հողերում՝ 100—125 մետր:



ԱԿՈՍԻ ԿԵՐԱՎԱՄԵՆ ՇԱՏ ՀԱՅՆԻՒՆ

Նկ. № 8.

Ակոսների խորությունը պետք է լինի 10-ից մինչև 20 սմ: Փոքը ակոսները լավ չեն, վորովինեան վոռողումից հետո շատ շուտ տիղմը լցնում է ու հողի խոնավացում այնպես լավ չի կատարվում, ինչպես մեծ ակոսների դեպքում է կատարվում: Խորացրած ակոսները լավ են, վորովինեան այդ ակոսների միջով հոսող ջուրն ավելի արագ, խոր ու լայն տարածությամբ կթրջի հողը, մանավանդ, առանձնապես ծանր, դժվարաթափանց հողերում:

Ակոսների յերկայնակի թեքությունը տարբեր է լինում: Ամենանպատականարմար թեքությունը համարվում է 0,003-ից մինչև 0,004, այսինքն՝ յերբ ակոսի անկումը (թեքությունը) 100 մետրի վրա հասնում է 30—40 մետր: Ակոսի թեքության սահմանային չափ համարվում է 0,001—0,009-ը:


Յերբ վոռողելի տարածության թեքությունները տատանվում են 0,001-ի և 0,009-ի միջև, այդին բաժանվում են քառակուսիների, ուղղանկյունների կամ սրանց այլ վարիանտների ու վոռողվում համապատասխան ակոսներով:

Տարածությունը խիստ զարիվալը լինելու դեպքում, յերբ ջրվող տարածության թեքությունը 0,009-ից ավելի յերբ, ակոսները պետք է զցել հորիզոնականների ուղղությամբ (թեքության ուղղահայաց), իսկ այդին ել անպայման պիտի լինի ռոելիք ֆալինք: Այս գեպքում ծառաշար-

քերի թեքությունը չպետք գերազանցի հետագա ակոսների թեքությունը, այսինքն՝ 0,001—0,009-ը, վորոնք անցնելու յեն ծառաշարքերին զուգահեռ:

Նման այդիներ զցելիս ծառաշարքերի, ինչպես և ակոսների թեքությունը վրբուելու համար պետք է ողտպիկ գըրքույկիս վերջում զետեղված աղյուսակից:

Ալգում ակոսներ զցելուց հետո, նախ քան վոռոգելը, վոռոգող առվի յերկարությամբ դութանով մի ուրիշ խոր առու յեն զցում, վորը կոչվում է փոխադրող ակոս և բահով լավ սարքում են, վոր ջուրը չվողողի:



Նկ. № 9

### Փոխադրող առվից վոռոգվող ակոսների ցուր մատակարագելը

Փոխադրող առու զցելն անհրաժեշտ է այն աեսակեակից, վոր վոռոգող առվից ջուրն ուղղակի ակոսների մեջ բաց թողնելիս, այդ առվի փորփրված ափերը կքանդի ու վողջ հողամասը կհեղեղի: Ուստի, յերբ այդ փոխադրող ակոսը պատրաստ է, վոռոգող առվից ջուրը նախ բաց են թողնում այդ փոխադրող առուն ու այդտեղից արդեն հավասարաշափ բաժանում 5—10 ակոսի վրա:

Վոռոգման սկզբին ակոսների վրա բարակ ջուր պետք ե թողնել, իսկ վորոշ ժամանակից հետո կարելի լի ջուրն ավելացնել:


Այսպես պետք ե վարվել և ահա թե ինչու. բարակ ջուրը գանդաղ ե հոսում ու իր ճանապարհին աստիճանաբար թրջում ե ակոսների հողի ամեն մի սասնիկը, առանց քայլայելու կնծիկները և, ընդհակառակը, կարծես թե սոսնձում, իրար ե կպցնում հողի մասնիկները, վորի շնորհիվ վերջիններս չեն քայլավում: Ակոսի ափերն ու հատակը նույնպես աստիճանաբար են խոնավանում, տիղմով չեն պատվում:

Մինչդեռ ջուրը շատ լինելիս անհամեմատ ավելի արագ ե հոսում: Իր ճանապարհին քանդում, փշրում ե ակոսի հատակին ու ափերին պատահող հողի մասնիկները, վորից հողի անցքերն արագությամբ լցվում են տղմով: Դրա հետեւ անցքերն առաջնային թափանցել հողի մեջ կամ շատ քիչ ե թափանցում: Զրի այն մասը, վոր հողի մեջ չի ծծվում, համար ակոսի ծայրին՝ բուրովին անողուտ դուրս ե գալիս այդուց:

Եթե վոռոգման սկզբում ջուրը բարակ բաց թողնենք ու աստիճանաբար ավելացնենք, վոռոգումն ավելի լավ ու ամելի արագ կկատարվի, վորովհետեւ, հոսելու ընթացքում, տղմով չպատած անցքերի միջոցով ջուրն ավելի լավ կթափանցի հողի մեջ:

Վոռոգող շիմի ամենալավ չափը պիտի համարել հեկտարին  $1\frac{1}{2}$ —2 բաշ (35—50 լիտր մի վայրկյանում), ընդ վորում թեթե ու զլուրաթափանց հողերում ջրի շիմն ավելի մեծ պետք ե լինի, իսկ ծանր, կավալին, դժվարաթափանց հողերում ավելի փոքր: Ճիշտ արդարես ել դաշտի ուժեղ թեքության գեպքում: Ջրի շիմը փոքր պիտի լինի, իսկ փոքր թեքության գեպքում՝ համեմատաբար՝ մեծ: Վոռոգման ջրի վաղջ շիմը ( $1\frac{1}{2}$ —2 բաշ) միաժամանակ պետք ե բաց թողնել  $\frac{1}{2}$  հեկտարից վոչ պակաս տարածության վրա:

Ծառաշարքերին զուգահեռ տկոսներ անցկացնելը նպառակահարմար և միայն մատղաշ այդիներում։ Բայց յերբ ծառերը մեծանում են, իրենց արմատներով խիտ ծածկում են վոչ միայն ծառաշարքերի միջն ընկած տարածությունը, այլև՝ ծառաշարքում ծառերի միջն յեղած տարածությունը, վորոնք միայն յերկայնակի ակոսներ լինելու դեպքում սովորաբար մնում են առանց ջրելու, ուստի արդեն մեծացած (4—5 տարեկան) ծառերը վոռոգելու համար, բացի յերկայնակի զցված ակոսներից, ծառաշարքերում, ծառերի միջն պետք և անցկացնել լայնակի ակոսներ։ Այդ լայնակի (ուղղահայաց) ակոսներն անց են կացվում զանազան ձևերով ու զանազան կոմբինացիաներով։ Յերբեմն կարճ, լայնակի ակոսներով միացնում են ծառին ամենից մոտ գտնվող յերկու յերկայնակի ակոս ու վոռոգման ժամանակ այդ ակոսի մեջ ջուրն ավելի ուժեղ հոսանքով բաց թողնում։




Նկ. № 10—21

Հաճախ ուղիղ լայնակի ակոսների փոխարեն ծառերի միջն անց են կացնում անկյունազծալին (շեղ-դիագոնալ) ակոսներ։

Կոլտնտեսականների անամերձ հին այդիներում, ուր միջարքալին տարածությունները միշտ ոգտագործվում են

ուրիշ կուլտուրաների համար, ամեն մի ծառ առանձնապես լավ վոռոգելու, ծառի արմատն ու նրա մերձականասերը ջրով լավ հազեցնելու համար, խորհուրդ ենք տալիս կիրառել վոռոգման հետեւյալ ձեր. բացի վորքը ակոսների հիմնական ցանցից, վոր անց ե կացվում միջշարքերում՝ այնտեղ ցանված կուլտուրաները վոռոգելու համար, յուրաքանչյուր ծառի շուրջը, բնին քիչ մոտ, 30—40 սահմեմետր խորությամբ ողակաձև ակոսներ փորել ու մերձակա ակոսից ջուրը բաց թողնել այնտեղ, մինչև վոր բոլորովին ծծվի հողի մեջ:



Ողակաչեզ (բնիսով) ակոսներով վոռոգման ընդհանուր ժեսչ:


74. № 12

Ծառի բունը փտելուց, փշանալուց զերծ պահելու համար պետք ե այնպես անել վոր ծառի շուրջը զցած ակոսը միապաղադի խոր ափսեյի ձև չընդունի: Բնի շուրջը պետք ե մի փոքրիկ շերտ հող թողնել: Այդ բանն անելլ շատ հեշտ ե, յեթե ողակաձև ակոսը կանոնավոր ե զցած:


Ջրելուց հետո, յերբ հողը չորանում ե, հողի լերեսը կուլտիվատորով անպայման պետք ե փխրեցնել ու վորշացնել այն կեղեր, վոր գոյանում ե միայն ակոսի մեջ:

Հողի փխրեցումը, բացի մոլախոտերը վոչնչացնելու  
նպաստելուց, ավելի մեծ ոգուտ ե տալիս այդուն նրանով,  
վոր հողը պաշտպանում  
և ուժեղ գոլորշիացու-  
մից:

Հողի փխրեցումը,  
սակայն, պետք ե կա-  
տարել այն ժամանակ, յերբ ազրոկանոններով պահանջ-  
վում ե այդ:



Նկ. № 13



Նկ. № 14

Մեր նոր, պտղաբուծական խոշոր անտեսություններում (Լուկաշեն, Այգեգործ և այլն) գործադրվող՝ ողակաձև ա-  
կոսներով ու թաւերով (շառակ) վոռոգելու յեղանակը մատ-  
ղաշ տունկերի համար նպատակահարմար չե, վորովհետե  
վոռոգման այդ յեղանակները հնարավորություն չեն տալիս  
մեքենայացնել հողի մշակման ու դաշտը վոռոգման համար  
նախապատրաստելու աշխատանքները: Վոռոգման այդ յե-  
ղանակները կարելի են կիրառել դիմավորապես թեթև հո-  
ղերում, վորոնց ջրային պայմանները վատ են, իսկ մնա-  
ցած բոլոր դեպքերում անպայման պետք ե կիրառել  
մանր ակոսներով վոռոգելու յեղանակը (ինֆելտրացիան  
ձեռվ), այդ ակոսներով լցնելով (հասակավոր, հին այգի-  
ներում) շարքերի մեջ յեղած վողջ տարածությունը:

Փոքր ակոսներով վոռոգելու յեղանակը, գոյություն  
ունեցող բոլոր յեղանակների մեջ, համարվում ե ամենա-  
լավերից մեկը, հետեւյալ պատճառներով:

1) ակոսային ձեռվ վոռոգելիս ջուրը դաշտում բաշխված ե համաշափ կերպով.

2) այս լեղանակը, մյուսների համեմատությամբ, վոռոգման համար ավելի քիչ ջուր ե պահանջում.

3) հեշտ ե ջուրը հողի մեջ յերկար պահելն ու գոլորշիացումից պաշտպանելը, վոռոգումից հետո փխրեցնելով ժոռերի շարքամիջյան տարածությունը.

4) կեղեւ միայն ակոսի մեջ ե գուանում, իսկ հողի մյուս մասերն ազատ մնալով ջրի մակերեսային վողողումից՝ փխրուն են մնում.

5) վոռոգման ակոսային լեղանակը լիակատար հնաբաժնությունն ե տալիս ալգու մշակման ու խնամքի բոլոր աշխատանքները մեքենայացնելու:

6) վոռոգման այս լեղանակն առանձնապես լավ արդյունքներ ե տալիս մեծ, խոշոր անտեսառներում՝ խորհրդական տեսառներում ու կոլտնտեսառներում, վարտեղ մեքենայական մշակում ե կիրառվում.

7) ակոսային վոռոգումը կարելի լե կիրառել ամեն տեսակ հողում ու գրեթե ամեն տեսակ թեքությունների վրա:

Խնչպես տեսանում ենք, մանր ակոսային վոռոգումն ամեն տեսակ առավելություններ ունի:

Անհրաժեշտ ե նշել նաև մեծ թեքություն ունեցող տարածության վրա այդի գցելու ու վոռոգելու մեթոդը:

Մեծ թեքություն ունեցող լանջերում գժվար ե լինում պտղատու ալգի գցել, առանց նախորոք հողը պատրաստելու Ալլավիսի հողամասերում այդի գցելու համար նախ պետք ե դարավանդ (տեռառ) պատրաստել, վորպեսզի հնարավոր լինի, ինչպես հարկն ե, հողը մշակել ու պըտդատու ծառերը վոռոգել: Այդ դարավանդն ախնպես պետք ե պատրաստել, վոր գրսի կողմը մի փոքր բարձր լինի ներսի կողմից: Զրի հոսանքն ապահովելու համար հռղա-

ժամանակակից լուսաւորական այն կողմն են անում, վոր կողմի վրա ջուրը պիտի հոսի:

Աղդ գարավանդը պատրաստելիս յերենք չի կարելի հող լցնել՝ թումբ շինելու համար, առանց նախորոք հեռացնելու գետնի ճիմը (յերեսի ամրացած շերտը), այլապես ջուրն ապարդյուն կհոսի, առանց ծծվելու հողի մեջ, նույնիսկ կարող ե պատճառ գառնալ գարավանդի քանդվելուն, ցած սողալուն:

### Յերբ վայրը իսկամ

թեք ե, գարավանդի դըսի չ արտադրող կողմն ամրացնում են քարե շարվածքով (չոր), վորը ծառայում և վորապես հենարան-պատ ունի զգալի թեքություն գեպի գարավանդը:



Նկ. № 15


Դարավանդներն սկսում են պատրաստել լանջի ստորոտից դեպի բարձունքը: Դարավանդի լայնությունը կախումն ունի միջոցներից ու տեղի պայմաններից, այս պատճառով ել բուրաքանչյուր դեպքում ու տեղի համար վորաշվում ե առանձին: Դարավանդի միջին լայնությունն անում են 3 մետր և առնվազն՝ 1,6 մետր:

Դարավանդների միջև տարածությունը կախված է տեղի թեքության աստիճանից: Վորքան իսկա լինի այդ թեքությունը, այնքան իրար մոտիկ կարող են լինել դարավանդները: Յուրաքանչյուր դարավանդի վրա պետք է անցկացնել յերկու առու՝ մեկը վերը — պատի ստորոտին՝ վորովածան առու, մյուսը՝ դարավանդի ստորին մասում պատի վերկը՝ դուրս տանող առու:

Դարավանդների բաժանված ու խիստ թեքություն ունեցող լանջերը կարող են վառոգվել սովորական լեզանակ-

Ներով — ակոսներով։ Ակոսներն անց են կացվում յուրաքանչյուր գարավանդի վրա ճիշտ այնպես, ինչպես նկարագրվեց վերը՝ այգու համար նորմալ սովորական պայմաններում։ Ակոսների ուղղությունը պետք է համապատասխանի դարավանդի ուղղությանը։ Ակոսի մերկարությունն անում են մինչև 50 մետր, գոռոգման ջրի շիթը մեծ չպետք և լինի — կես բաշ, զոր բաժանվում, բաշիվում և բոլոր գարավանդների վրա։

Ցեթե գարավանդներ պատրաստելը հնարավոր չե, ապա ծառերը կարելի յեւ անկել ուղղակի փոսի մեջ, ծառի շուրջը թասանման փոս անելով։ Սակայն այդ թասի հատակն ու շուրթերը հորիզոնական պետք ե լինեն։ Այդ բները՝ թասերը ծառայում են նաև մինուլորտային տեղումներն իրենց մեջ պահելու համար։



Նկ. № 15. Միջաբարձր կուլտուրաներ՝ ջրովի պողոտու այգում

Այս գեպքում ծառերի գոռոգումը կատարվում է այսպես. Ջուրը ծառաշարքերի միջով անդնող առվից բաց և թողնվում լուրաքանչյուր «թասի» մեջ, սկսելով ներքեկի թասից։ Յուրաքանչյուր թասը զբեթե լիքը լցվում է ջրով ու ջուրն ալղպես ել մնում ե մինչև հողի մեջ ծծվելը։ Ցերը հողը մի փոքր չորանում է, փխրեցնում են։

Պոռոգման այս յեղանակը սացիսնալ չե, ուստի կարելի յեւ կիրառել միայն խիստ մեծ թեքություն ունեցող հողերում, ուր այս կամ այն պատճառով անհնարին ե դա-

քավանդներ կառուցել և վոռոգման ակոսալին լեղանակը կիրառել:

Այն բոլորը, ինչ ասվեց պտղատու այգիների վոռոգման մասին, նույնը կարելի յե ասել և խաղողի այգիների վերաբերմամբ:

Սոցիալիստական խոշոր տնտեսությունը չի կարող խաղողի մշակումը կատարել այնպես, ինչպես այդ կատագում ելին ձեռքի աշխատանքի ու հողի մասնավոր սեփականատիրության ժամանակ:

Պապենական այդ հին ձեռքին զալիս են փոխարինելու նորերը: Խաղողի կուլտուրայի փոխանցումը թմբավոր սիստեմից ցցավորի՝ պահանջում ե փոխել նաև վոռոգման լեղանակը:

Հին ձեռվ վողողմամբ կամ թմբերով վոռոգելու փոխարեն այժմ մշակման այս նոր՝ ցցավոր լեղանակի պահանձններում, վորը հնարավորություն ե տալիս այգում աշխատանքները մեքենայացնելու, անհրաժեշտ ե անպայման կիրառել մանր տկոսներով վոռոգելու լեղանակը: Խաղողի այգիներում վոռոգման այս լեղանակը գործադրելու դեպքում ես պետք ե կիրառել այն բոլոր միջոցներն ու ձեռքը, ինչ ասվեց վերը՝ պտղաբուծական այգիների վոռոգման այդ լեղանակի մասին խոսելիս:

Այսպես, որինակ, 0,01 և ավելի բարձր աստիճանի թեքություն ունեցող հողեր լուրացնելիս, ինչպես, որինակ՝ Նոերն են ու Մ. Սարդարաբաղը, անհրաժեշտ ե հողամասի նույնապիսի «ուելյեֆային» բաժանում կատարել, ինչպիսին կատարում ենք պտղատու այգու համար: Սակայն, քանի վոր խաղողի այգու միջլարքային տարածությունն անհամեմատ ավելի փոքր ե, քան պտղատու ծառերինը, ուստի խաղողի արգու «ուելյեֆային» բաժանումը քիչ բարձանում ե ու հարթաշափի կիրառում ե պահանջում, հետեւ պես այդ աշխատանքը կատարելու համար անհրաժեշտորեն

պահանջվում եւ և այդ գործիքին ծանոթ մարդու մասնակցությունը:

Խաղողի այգու համար «ուելյեֆալին» հողաբաժանման աշխատանքների կատարման հետեւալ կարգը կարելի յետուաջարկել.

Նախ՝ ընտրած հողում (բարձրից սկսած) գանում են ու ցցերով նշում թեքության գծի այն ուղղությունը, վորմենք հանձնաբարել եյինք ակոսային վոռոգման համար Այգու հատակաղծման այդ գծերը գցվում են հողի ուղեցիքի համաձայն: Շարքերի համար ընդունված ուղղությունների մեջ յեղած տարածությունները հետազայում բաժանվում են այս կամ այն մեթոդով (ավելի լավ եւ ըստ ուղղահայցների) շարքերը մեկը մյուսից 2,5 մետր հեռու, վորը համապատասխանում եւ միջշարքալին տարածության լայնությանը, պահպանելով շարքերի զուրահեռականությունն իրար վերաբերմամբ:

Մեքենայացումն ավելի եփեկտավոր դարձնելու համար, պետք եւ ըստ կարելույն շտկել, ուղիղ դարձնել շարքերն ի հաշիվ թեքության ավելացման (մի փոքր ավելացնելով թեքությունը):

Այսուհետև նախագծված շարքերի ուղղությամբ կատարվում են պլանտացիային աշխատանքները, յեթե դրանք կատարվելու յին ձեռքով: Իսկ յեթե այդ աշխատանքները մեքենայացված են ու կատարվում են անընդհատ մասսիվներով, ապա վազի համար շարքեր գցելը կատարվում եւ պլանտացի աշխատանքներից հետո:

Խաղողի ալգիներ գցելու առաջին տարիները, յերբ տեղի յին ունենում վազի արմատացումն ու կտրոնների զարգացումը, վոռոգման համար կարելի յեւ բավական համարել մի ակոսը, այն գցելով շարքերի ուղղությամբ և 40—50 սանտիմետր վազերից հեռու:

Յերրորդ տարուց սկսած, յերբ վազերի արմատներն արդեն բավականաշատ զարգացած են լինում ու վազերն

ել ծածկած, միջաբքային վողջ տարածությունը պետք և ծածկել լրացուցիչ ակոսներով (ընդամենը 4—5 ակոս) ու նրանցով կատարել վոռոգումը:




Նկ. № 17

Յերբ խաղողի այդու հողը ծանր և ու թեքությունը քիչ, կարելի է խորհուրդ տալ կիրառել ակոսներով վողողերու վոռոգման յեղանակը:

Այս յեղանակով այգին վոռոգելիս, ակոսի ամենաներքի մասում «կոճակ» են անում ու ակոսի փորոշ մասը ջուր լցնում: Աստիճանաբար՝ ներքեից դեպի վեր «կոճակ» ներ՝ շինելով՝ մաս-մաս վողողում, ջրում են ամբողջ ակոսը, մինչև նրա վերին մասը:

Ստորև նկարի վրա թվա-նշաններով ցուց է տրված վոռոգման ուղղությունը:

Փոխադրող՝ ակոս



Նկ. № 18.

## 4.

## ՎՈՐՈԴԵԼՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԻ

Վոռոգման նորմա կոչվում է ջրի այն քանակը, վորն անհրաժեշտ և մի հեկտար հողամասը մի անգամ ջրելու համար՝ այս կամ այն բաւլսի նորմալ, կանոնավոր աճման համար:

Գործնականում շատ հաճախ ի չարն են գործադրում ջուրը, մի անգամից տալով ավելի շատ, քան պետք է բույսին: Դրանից վոչ թե ոգուտ և ստացվում, այլ վիաս: Առանձնապես միանգամից շատ են ջուր բաց թողնում այն տեղերում, ուր ջրում են վողողմամբ: Այդ ավելորդ ջուրը ծծվում է հողի մեջ, հասնում գրունտի ջրերին ու խիստ բարձրացնում նրա մակերեսութը: Էսկ մակերեսին մոտիկ գրունտի ջրերը պատճառ են դառնում հողերի ճահճացման և աղակալման և հետո վատ են ազդում բռյամերի աճեցողության վրա: Զուրը միանգամից մեծ քանակությամբ հողի վրա բաց թողնելով չենք կարող լերկար ժամանակ պահել հողի մեջ, վորովհետեւ հողը կընդունի այնքան միայն, վորքան ջուր նրա մեջ կարող ե ծծվել ու պահպանվել: Դրանից ավելի նա ընդունել և պահել չեն կարող:

Պտղատու ծառերի համար վոռոգման նորմաները շատ բազմազան են և կախում ունեն հողի բնույթից, ծառերի հասակից, վոռոգման յեղանակից, հետագա մշակումից և այլն: Այդ պատճառով ել վոռոգման նորմա վորոշելիս՝ պետք է ղեկավարվել մի շարք նկատառություններով, առանձնապես նկատի առնելով այգու առանձնահատկություններն ու աեղական աշխատողների փորձը:

Թեթև, զլուրաթափանց հողերը պետք եւ վոռոգել փոքր նորմայով, բայց շուտ-շուտ, փրովիետեւ միանգամից մեծ քանակությամբ բաց թողնված ջուրը չափազանց խորը կթափանցի հողի մեջ, անժատչելի կդառնա ծառի արմատների համար, հետևապես և կկորչի ապարդյուն։ Մինչդեռ փոքր նորմայով բաց թողած ջուրը կտարածվի այն շերտում միայն, ուր ծառի արմատներն ավելի զարգացած են, վերջիններս այդ ջուրն ամբողջապես կոդտագործեն և իր նպատակին կծառայեցնեն։ Ծանր, լայ. խոնավունակ հողերը, ընդհակառակը, պետք եւ վոռոգել ավելի մեծ նորմայով, սակայն ուշուց, ավելի լեռի ընդմիջումներով։

Մատղաշ ծառերի (մինչև 3 տարեկան) վոռոգման նորման համեմատաբար փոքր պետք եւ լինի, վորովհետեւ նրանց արմատները դեռ թույլ են զարգացած, հողի մակերեսին մոտ են, ուստի ջուր վեցցուում են հողի վերին շերտերից։ Այդ մոմենտը պահանջում է շուտ շուտ, կարձ ընդմիջումներով կտարարել վոռոգումը։

Հասակավոր (5—6 տարեկան) ծառերին ջրի ավելի մեծ նորմա պետք եւ տալ, վորպեսզի հնարավոր լինի բավարարել հողի խորքը տարածված նրանց արմատները, բայց վոռոգման ընդմիջումները պետք եւ լերկար անել վորովհետեւ ջուրը հողի խորքն անցնելով՝ քիչ եւ գոլորշիանում ու փշանում։

Դուրի ու Սաղդարաբաղի ցածրադիր գոտում, ուր գրանտի ջրերը խորն են ընկած, ակռային յեղանակով վոռոգելու դեպքում, հասակավոր ծառերի վոռոգման նորմա կարելի լեռնդունել հեկտարին 1000 լից մինչև 00 խոր. մետր, ընդ սմին 1000 լի մետր ցանկալի լեռ տալ հատկապես ջատ ջուր պահանջող բույսերին, ինչպես որինակ խնձորենուն, սալորենուն, դեղձենուն և այլն։

Մատղաշ ազգու վոռոգման նորման պետք եւ ընդունել հեկտարին մոտավորապես 500—400 լի մետր, սա-

կայն համեմատաբար ավելի հաճախակի պիտի ջրել, քան  
ին այդիները:

Խաղողի այգիները մանր-ակոսացին լեղանակով վոռո-  
պելիս, սկզբնական վոռոգումների ժամանակ պետք է տալ  
չեկտարին՝ 1200—1000 լի մետր, իսկ վերջին վոռոգում-  
ների ժամանակ՝ 1000 լիմ:

Վողողման լեղանակով ջրելիս խաղողի ալգուն ջրի  
ավելի մեծ նորմա պետք է տալ, քան մանր ակոսներով  
վոռոգելու ժամանակը. Առաջին լերկու վոռոգումներին՝  
1200—1000 մետր՝ հեկտարին:

Մի հեկտար այգու վոռոգման տևողությունն ընդուն-  
ված նորմայով վորոշելու համար, այսինքն՝ վորոշելու թե  
ինչքան ժամանակ պետք է գործադրել մեկ հեկտար այ-  
գուն անհրաժեշտ քանակությամբ ջուր տալու համար  
այսպես են անում. վոռոգման նորման բաժանում են վո-  
ռոգման շիթի՝ մեծության վրա, վորով տվյալ դեպքում  
կատարվելու լե վոռոգումը (մեկ բաշ, լերկու բաշ և այլն)՝  
և ստացված արդյունքը բաժանում են 3600-ի վրա (մի  
ժամվա բովեների թվի վրա): Իմանալու համար տևողու-  
թյան ժամերի թիվը:

Վորովինեակ վոռոգման նորման արտահայտված և խո-  
րանարդ մետրերով, իսկ վոռոգման շիթի մեծությունը  
թիտրերով, ուստի հաշվարկումը պարզեցնելու համար՝ ֆոր-  
մուլալի մեջ՝ չափերի համապատասխան փոխարկում կա-  
նոնք և կոտանանք այսպիսի պատկեր՝

$Z = \frac{m}{z, b \times p}$  ժամ 2 — վոռոգման տևողություն,  
m — վոռոգման նորմա  
p — վոռոգման շիթ

Որինակ՝ մի հեկտար պտղատու ալդի վոռոգելու համար մասը ակոսներից վոռոգման շիթով թափվում է 50 լիտր (մի վայրկանում 2 բաշ) ջուր. պետք է տալ ընդունված նորման—1000 լի մետր։ Վորովեսզի իմանանք, թե քանի ժամում կարող ենք այդքան ջուր տալ մի հեկտար հողին, մեր տվյալները տեղադրում ենք վերը բերված ֆորմուլալի մեջ և ստանում։

$$Z = \frac{m}{3,6 \times p} = \frac{1000}{3,6 \times 50} = 5,5 \text{ ժամ.}$$

Այսպիսով գտնում ենք, վոր տվյալ պայմաններում մի հեկտար ալդի վոռոգելու համար, տալով նրան 1000 խմ ջուր, պետք է գործադրել հինգեկես ժամ։

Եերբ հարկավոր ե գոնել վոչ թե մի ամբողջ հեկտարի, այլ ավելի փոքր տարածության վոռոգման տևողությունը, այդ դեպքում տարածության մեծությունը՝ արտահայտված հեկտարի մասերով, բաղմապատկում են վոռոգման նորմալի վրա ու այնուհետեւ արդեն վարվում այնպես, ինչպես առաջին դեպքում։ Որինակ՝ պետք է վորոշիլ 5400 քառ. մետր ալդու վոռոգման տևողությունը նույն պայմաններում, ինչ առաջին դեպքումն եր, այսինքն՝ վոռոգման նորման 1000 լի մետր, իսկ վոռոգման շիթը—2 բաշ, այսինքն՝ 50 լիտր (մի վայրկանում),

$$Z = \frac{a \cdot m}{3,6 \cdot p}$$

վորտեղ այն տարածությունն է, վորի վոռոգման տեղությունն է վորոշվում։ Թվերը տեղադրում ենք իրենց տեղը, ընդ վորում քառակուսի մետրերով տրված տարածությունն արտահայտելով հեկտարի մասերով, ինչպես ասվեց վերև։ Հայտնի յեւ, վոր հեկտարը պարունակում է տաս հազար քառ. մետր, հետեւապես՝ մեզ տրված 5400 քառ. մետրը հեկտարի մասերով արտահայտելու համար, 5400-ը բաժանում ենք 10,000-ի վրա և ստանում ենք 0,54

հեկտար: Նշանակում ե՞ ա=0,54 հեկտարի, տ=1000 լուր-  
մետրի, ρ=50 լիտրի (մի վայրկյանում)

$$Z = \frac{0,54 \times 1000}{3,6 \times 50} = 3 \text{ ժամի},$$

այսինքն՝ ինացանք, վոր մեզ տրված 5400 քառ. մետր  
այդին իր լրիվ նորմալով վոռոգելու համար պետք է գոր-  
ծադրել 3 ժամ:

Ընդհանրապես գործնականում յուրաքանչյուր առան-  
ձին գեպքում շատ հեղտ և վորոշել վոռոգման տեղաւ-  
թյունը, քանի վոր հայտնի յեն դրա համար բոլոր տվյալ-  
ները: Վոռոգման նորման տալիս և գրուղատնեսը,  
այդու տարածությունը հայտնի լի, իսկ վոռոգման ջրի  
չափը, հոսումը կարելի յե վորոշել աչքի չափով, չմոռանալով  
սակայն, վոր բաշը հավասար ե 25 լիտրի մեկ վայրկյանում:

### Վոռոգման թիվն ու երա բաշխումը

Մենք քննեցինք, թե ինչպես պետք ե պաղասաւ այ-  
դին վոռոգել—ի՞նչ յեղանակով, ի՞նչ նորմաներով, սակայն,  
բացի այս ամենից, պետք ե իմանալ նաև թե քանի՞ ան-  
գամ և յերբ պետք ե վոռոգել, այլապես քիչ արդյունք  
կտան թե վոռոգման լավ յեղանակը և թե կանոնավոր  
նորման:

Յուրաքանչյուր տարի պայմանական կերպով ընդու-  
նում են ծառի հետեւյալ վեգետացիոն շրջանները.

առաջին շրջան—մինչև ծաղկման սկիզբը.

յերկրորդ շրջան—ծաղկելու սկզբից մինչև ծաղիկնե-  
րի թառամելը.

լերրորդ շրջան—ծաղիկների թառամելուց մինչև պը-  
տուղների լցվելը.

չորրորդ շրջան—պտուղների հասունացումը.

հինգերորդ շրջան—բերքահավաքից մինչև տերե-  
թափը:

Առաջին շրջանում,—մինչև ծառի ծաղկելը—կարիք չի լինում այդին հաճախակի վոռոգելու, վորովհետև գարնան սկզբներին՝ մարտ-ապրիլ ամիսներին առանց այն ել անձրևներ շատ են լինում: Տեղումներն ու արդ ամիսներին մի անգամ վոռոգելը միանգամայն բավական ե պըտդատու ծառերի նորմալ դարձացումն ապահովելու համար:

Զուր անհրաժեշտ ե տալ ծառերին ապրիլի վերջերից (20-ից) մինչև մայիսի 10-ը:

Այդու ծաղկումը ցածրագիր գոտում սկսվում ե ապրիլի կեսերից կամ մայիսի սկզբից:

Ծառերի հիմնական տեսակները՝ գեղձենին, խնձորենին, սալորենին, տանձենին սկսում են ծաղկել ապրիլի 20-ից և ծաղկումը վերջացնում են մայիսի 15-ին: Վաղահան տեսակների ծաղկումն սկսվում ե ավելի վաղ, քան ուշ հասնողներինը:

Աճման այս յերկրորդ շրջանը, կոպիտ հաշվով, ընկնում է մայիս-հունիս ամիսներին (մայիսի 5-ից հունիսի 5-ը):

Ծաղկելու ժամանակ այդին չի կարելի վոռոգել: Զուր պեաք ե տալ ծառերին ծաղկելուց 8—10 որ հետո: Այդ ամբողջ շրջանում այդին յերկու անգամ միայն պեաք և վոռոգել՝ 15—20 որ ընդմիջումով:

Ծաղկելուց ու կոկոնը կապելուց հետո սկսվում և ծառի պտուղները լցնելու շրջանը: Այդ լինում ե միջին հաշվով հուլիս-օգոստոս ամիսներին, յերբ տարվա ամենաշող ժամանակն է ու ոգն որեցոր չորանում ե: Ուժեղ կերպով ավելանում ե ջրի գոլորշիացումը թե հողի յերեսից և թե բույսի տերևների միջոցով:

Այս—պատւղների լցվելու շրջանը, ամենաեյական ու պատասխանատու շրջանն է ծառի կյանքում: Այս շրջանում ծառն ամենաբուռն կերպով ջրի պահանջ և զգում և ջրի պակասն այս շրջանում կարող ե կործանարար աղքեցություն ունենալ բերքատվության վրա: Այդ պահին հօգի մեջ միշտ բավարար քանտկաթյամբ ջուր պետք է

Մինի: Այդ միջոցին հռով ամենից շատ և ջուր ծախսում: Վորպեսզի ջրի այդ ծախսումը բավարարվի, վորպեսզի ծոսերը նորմալ կերպով զարգանան, այս շրջանում ծառերը պետք և հաճախ ջրել, ավելի հաճախ, քան մինչև նրանց ծաղկելը: Այս շրջանում ալզին պետք և վոռոգել էրեք անգամից վոչ պակաս, յուրաքանչյուր 15 որը մեկ անգամ:

Գտուղների հասունացումն սկսվում և ոգոստոսի Զ-րդ կեսից և շարունակվում և ամբողջ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները:

Գտուղների հասունացման շրջանում այդին վոռոգելու կարիք ալլեւ չկա. վոռոգելը նույնիսկ մնասակար և վառողումն անհրաժեշտ չե այն պատճառով, վոր ծառն արդեն այդ ժամանակ ավարտում և իր զարգացումն ու մեծ քանակությամբ ջրի պահանջ չի զգում: Բացի այդ, զոլորշիացումը հողի մակերեսից ու բույսերի միջից զդալի չտփով պակասում և, վորովհետեւ այդ ժամանակ յեղանակների ավելի ցուրտ և, քան ամառը և ողն ավելի խոնավ թոկ ուշ (աշնան) վոռոգումների մվասը մեծ և:

Այդ՝ անժամանակ, ուշ աճման պատճառ կդառնա ու կերկարաձգի պտուղների հասունացումը: Բացի այդ, ծառի մատադ ճյուղերը մինչև ձմեռնամատի ցրտերը կարող են չհասնել, վորից ծառը կվնասվի:

Այսպիսով, պտղատու ալգու համար վոռոգման հետեւ վրա բաշխումն ենք ստանում. բույսերի զարգացման առաջին շրջանում—մինչև ծաղկելու սկիզբը—ջուր չի արփում կամ, ծայրահեղ գեպքում, յեթե զարնան պայմաններն աննպաստ են, վորոռոգվաւմ և մի անգամ և այն ել այդ շրջանի կեսին: Յերկրորդ շրջանում՝ ծաղկման սկզբից մինչև պտուղ բռնելը՝ պետք և վոռոգել մեկ անգամ, ընդ վորում ծաղկման ժամանակ ջուր չի կարելի տալ, այլ արփում և ծաղիկները թափվելուց 8—10 որ հետո Յերրորդ շրջանում՝ պտուղների զարգացման շրջանում, ամե-

Նամեծ քանակությամբ ջուր և արգում, ընդհանուր առամբ լերեք անդամ՝ յուրաքանչյուր 15 որը մեկ անդամ:

Պտուղների հասունացման շրջանում այդին այլևս չկ վաստվում: Վուրոգումը պետք է գալարեցնել պառադների հասունացման սկզբից 8—10 որ առաջ:

Վերևում հիշված վուրոգումների թիվը՝ ըստ բուկ-սերի զարգացման շրջանների՝ նշանակում են այսպես՝ 0—1—3—0—1 կամ 1—1—3—0—1:

Թվանշանները ցույց են տալիս, թե վոր շրջանում և քանի անդամ պետք է վուրոգել:

Պազատու ծառերի տարբեր տեսակների զարգացման շրջանն սկսվում է տարբեր ժամանակներում, դրա համար ել բոլոր պտղատու ծառերի վուրոգման ժամկետները նշելու հնարավորություն չունենք: Յուրաքանչյուր կոլտնտեսական կամ խորհունտեսության բըիզադիր, զիտենալով իր ծառերի տեսակներն ունբանց զարգացման վերը նկարագրեած շրջանների սկիզբը՝ պետք և ըստ այդմ նշանակի վուրոգման ժամկետները, ոգտվելով մեր ցուցումներից:

Մեր գաշտային շրջաններում տարածված պտղատու ծառերի հիմնական տեսակների՝ վեղձենու, ծիրանու, ինձորինու վուրոգման թվին և վուրոգման սկզբի վերաբերյալ կը երենք հետեւյալ որինակելի թվերը:

1)	Մերակի-1-ին ջուր ոկտոբ	10 մայիսի
2	>	10 հունիսի
3	>	30 հունիսի
4	>	20 հուլիսի
5	>	25 օգոստոսի
2)	Դեղձենի	20 մայիսի
1	>	10 հունիսի
2	>	30 հունիսի
3	>	20 հուլիսի
4	>	1 սեպտեմբերի
5	>	1 սեպտեմբերի
3)	Ինձորինի	10 սպրինի
(աճողակա)	2	20 մայիսի
3	>	10 հունիսի
4	>	1 հուլիսի
5	>	20 օգոստոսի
6	>	1 սեպտեմբերի

**Մատղաշ ծառերի վոռոգման թիվը հին ծառերի վոռոգման համեմատությամբ պետք է կրկնապատկել:**

Նորատունկ, արմատները դեռ չզարդացած ու ջուրը շատ ծծող ծառերի ջրի պահանջը բավարարելու համար, պեսաք և նորատունկ, մատղաշ այդին շուտ-շուտ վոռոգել, ստկան ջրի փոքր նորմաներով:

**Մատղաշ ծառերի համար կարելի յե վոռոգման հետևյալ ժամկետները նշել. մի ջուր՝ այդին ցցելուց հետո (մարտապղիլ), յերկու ջուր՝ մայիսին, յերկու ջուր՝ հունիսին յերեք ջուր՝ հուլիսին, յերեք ջուր՝ ոգոստոսին և մի ջուր՝ սեպտեմբերին։ Այս առաջին տարին։ Հետագա տարիներն առաջին ջուրը տրվում է մայիսին, իսկ մնացած բոլորը մնաւմ են նույն ժամկետներին — թվով 10։**

**Խաղողի այգու համար վոռոգման բաշխումը կարող է լինել հետևյալ կերպ՝**

- |   |   |
|---|---|
| 1 | վոռոգում մայիսի 11-ից մինչև մայիսի 31-ը |
| 2 | » հունիսի 10-» » հունիսի 19-ը           |
| 3 | » հունիսի 20-» » հուլիսի 19-»           |
| 4 | « սեպտեմբերի 26-ից » հոկտեմբերի 11-ը։   |

**Զորբորդ վոռոգումը վեգետացիան վոռոգում չե, այլ միայն նեշտացնում ե վազերի թաղելը, ուստի այս վոռոգման նորման պետք է իջնենել մինչև 800 խ մետրի։**

**Զրի պահպանումը հողի մեջ**

Քերեռում մեր ցուլց տված բոլոր միջոցառումների կերպում այն ժամանակ միայն ցանկալի արդիունք կտա, յերբ ծառերը անկերտ առաջ, ինչպես և նրանց աճման շրջանում հողը լավ մշակվի։

**Հարկավոր է վոչ միայն հողը լավ վոռոգել, այլև կարողանալ ծառին տրված ջուրը պահպանել հողի մեջ, իսկ դրան կարելի յե հասնել հողի վերին շերտի համապատասխան մշակումով — փխրեցնելով այն։ Դրանով կարելի լի մեծ շափավ հողի լերեսից ջրի գոլորշիացումը նվազեցնել։**

Փիսրեցրած հողի մեջ ոդն ել հեշտությամբ ու մեծ քանակությամբ կթափանցի, իսկ սղը նույնպես անհրաժեշտ և թե արմատների շնչառության և թե հողում ընթացող բազմապիսի պրոցեսների համար:

Հողի փիսրեցումն ու կուլտիվացիան պետք ե հարմարեցնել վոռոգման ժամանակին: Ամբողջ սեզոնում պետք ե կատարել 2—3 կուլտիվացիա՝ ջրելուց հետո: Այդ բոլոր աշխատանքների ժամկետները թե վոռոգման, թե հողի մեքենայական ու ձեռքի մշակման և այլն՝ կարելի յե նախատեսել աշխատանքի պլանում՝ ու բոլոր աշխատանքները կատարել վորոշ կարգով, վորոշ հաջորդականությամբ:

Առանց այս խիստ կարգ ու կանոնի և հաջորդականության՝ կուլտիվացիայի, փիսրեցման աշխատանքների եֆեկտը խիստ պահանջի կիմնի, մանավանդ յեթե դրանք կատարվեն անժամանակ:

Աշխատանքի այսպիսի խիստ կարգ ու կանոն, լավ պլան կարելի յե կիրառել ու իրականացնել ինարկե, միան խոշոր տնտեսություններում — խորհունտեսություններում ու կոլտանտեսություններում:

### Ց ա ն ց ի պ ա ն պ ա ն ո ւ մ ը

Վոռոգման ցանցի կանոնավոր ու արդյունավետ աշխատանքի համար պետք ե նրա բոլոր առուները մաքուք ու կանոնավոր պահել, հետեւել, վոր նրանք չլցվեն տղմով, բուսականությամբ չծածկվեն: Վորպեսզի ջրանցքը կարպազանա կանոնավոր ջուր տալ, այն պետք ե մաքրել և այդ աշխատանքը պետք ե կատարել անպայման վոռոգման սեղոնից առաջ:

Վոռոգման ցանցը հաճախ մնասվում ե նաև հեղեղումից: Հեղեղումները մեծ մնամներ են հասցնում անտեսաթլանը, վորովինեակ հեղեղման ժամանակ ջրանցքները չեն գործում, վոռոգումն ուշանում ե, դաշտերն անհրաժեշտ քանակությամբ ջուր չեն ստանում, իսկ ջուրը հեղեղում, քարուքանդ ե անում ճանապարհները:

Առաների քանդվելն ու գրա հետեանքով առաջացած հեղեղումները բացառապես վատ խնամքի, թմբերն անտառաններից վունատակ տալու և մի շարք այլ պատճառների հետեանք են: Ուստի վոռոգման ցանցի աշխատանքի ժամանակ պետք է ուշադիր կերպով հետեւ ցանցի դրությանը և ժամանակին վերացնել բոլոր թերությունները:

Զրի բաշխումը կատարվում է ջրոգտագործման համակ պլանի համաձայն: Այդ պլանը կազմում են ջրալին անտեսության մարմինները՝ ջուրն ոգտագործողների հետ միասին:

Ամեն մի կողտնտեսության ու խորհանտեսության, վոր գտնվում է վորեւ ջրաբաշխ ջրանցքի շրջանում, ջրոգտագործուն պլանով վորոշ քանակությամբ ջուր և հատկացվում, վոռոգման շրջանի յուրաքանչյուր ամսվա համար, միաժամանակ նշելով այս կամ այն կուլտուրայի վոռոգման ժամկետը, իսկ սղության գեպքում՝ սահմանելով նաև վորոշ հերթականություն:

Վորշ շրջանի վոռոգումը ժամանակին ու կանոնավոր կատարելու համար, բոլորն անշեղորեն պետք է հետեւն ջրոգտագործման պլանին ու թույլ շտան, վոր մեկն ու մեկը խախտի այն (կամ, հակառակ պլանի, ինքնակամ խլի ջուրը): Ցեղե յուրաքանչյուր կողտնտեսություն կամ խորհանտեսություն վերցնի այնքան ջուր, վորքան ինքն և ուղում, կամ վերցնի այն ժամանակ, յերբ ինքն և կամենում, դրանով մրուս կողտնտեսություններն ու խորհանտեսությունները կզրկվեն ջրից ու հնարավորություն չեն ունենաւ իրենց հողերը վոռոգել այնպես, ինչպես հարկն եւ: Դրա համար ել գաշտերը պետք է վոռոգել միայն պլանային կարգով այնպես, ինչպես սահմանված եւ ջրոգտագործման պլանով:

### ՅԵՐԱՄԻԹԱԿՈՒԱ

Իրրե յեզրափակում, նշենք այն հետեւթյուններն ու կանոնները, վորոնց պետք ե հետեւել ու պահպանել պըստառ այդում աշխատելիս.

1. այն այդիներում, վորոնց մակերեսի թեքությունը 0,01-ից (1 մետր 100 մետրին) մեծ ե — աշխատանքների մեջնայացումն ու ծառերի կանոնավոր վոռոգումը հնարավոր դարձնելու համար, այդի գցելիս անպայման պետք ե կիրառել «ուելյեֆալին» յեղանակը.

2. վոռոգման ամենալավ յեղանակը պետք ե համարել մանր ակոսներով վոռոգելը: Վոռոգման այս յեղանակը տալիս ե ջրի խնայողություն, ապահովում ե հողի լավ, համահավասար խոնավացումը, պահպանում ե ջուրը, հնարավորություն ե տալիս բալոր աշխատանքները մեջնայացնել և ամենալավ ձեռվ ջուրը հասցնում ե արմատների ամենամանր ճյուղավորումներին:

Այս յեղանակը հնարավոր ե կիրառել գրեթե ամեն տեսակի թեքություն ունեցող հողերում.

3. խոնավությունը հողի մեջ պահելու համար, վոռոգումից հետո հողը պետք ե փիրեցնել:

4. խիստ թեքություն ունեցող լեռնալանջերում ևս, ուր այդ հնարավոր ե, պետք ե կիրառել ակոսային վոռոգման յեղանակը, խուսափելով «թամերով» (փոսերով) վոռոգելուց:

Դարավանդներում անպայման կիրառել մանր ակոսներով վոռոգելու յեղանակը.

6. հին այդիներն ավելի շատ վոռոգել պառւղները լցվելուց առաջ՝ բոլորսվին չվոռոգել՝ ծառերը ծաղկելու, պառզները հասունանալու ժամանակ և ուշ աշնանը.

7. մատղաշ ալգին վոռոգել սկսած մալիս ամսից, 15 արից վոչ ավելի ընդմիջումներով:

Մեր պտղաբուծական խորհանտեսությունների ու կուտնառեսությունների հիմնական մասն ընկած ե Հայաստանի

ցածրադիր գոտում՝ Ղոերի, Սարդարաբաղի, Ղամարլիի,  
Հոկտեմբերյան (Ղուրդուղուլու) և այլ շրջաններում։ Նշված  
պայմաններն ու տվյալները նկատի ունեն գլխավորապետ  
այդ շրջանների խորհունտեսություններն ու կոլանտեսու-  
թյունները։

Նախալեռնային ու լեռնալին շրջանների պատղարու-  
ծական խորհունտեսություններն ու կոլանտեսությունները՝  
ոգտվելով գրքուրկիս ընդհանուր կանոններից և հաշվի առ-  
նելով բոլոր պայմանները՝ զյուղատնտեսի ոգնությամբ,  
միշտ կարող են կազմել իրենց այգու վոռոգման սխեման,  
վորոշել վոռոգումների թիվը, ժամկետները և նորման։

---



Հագելիքություն

**Մառաւարքերի թեքության աղյուսակ, կախված ջրելու  
տկանների թեքությունից**

<b>Մառաւարքերի թեքության աղյուսակ</b>	<b>Տառերի հեռավորությունը միաժահ- ցից՝ ծառաշարքում (մետրերով)</b>	<b>Հագելիքությունը 6   7   8   9   10</b>				
		<b>Դործիքի մեծ զոտքը յերկար ողափք և լինի կարձից</b>	<b>6</b>	<b>7</b>	<b>8</b>	<b>9</b>
0.2 - 100 մետրներ	0.2	1.2	1.4	1.6	1.8	2.0
0.3 - 100 >	0.3	1.8	2.1	2.4	2.7	3.0
0.4 - 100 >	0.4	2.4	2.8	3.2	3.6	4.0
0.5 - 100 >	0.5	3.0	3.5	4.0	4.5	5.0
0.6 100 >	0.6	3.6	4.2	4.8	5.4	6.0
0.7 - 100 >	0.7	4.2	4.9	5.6	6.3	7.0
0.8 - 100 >	0.8	4.8	5.6	6.4	7.2	8.0
0.9 - 100 >	0.9	5.4	6.3	7.2	8.1	9.0
1.0 - 100 >	1.0	6.0	7.0	8.0	9.0	10.0

**Մառաւարքերի միջն ապածությունն ընդունված է՝  
Ծրբանու համար 10 մետր**

<b>Դեղձենու</b>	<b>»</b>	<b>6</b>	<b>»</b>
<b>Խնձորենու</b>	<b>»</b>	<b>9</b>	<b>»</b>
<b>Ֆանձենու</b>	<b>»</b>	<b>8</b>	<b>»</b>
<b>Սալորենու</b>	<b>»</b>	<b>6</b>	<b>»</b>



Պատ իմբ։ Ա. Յ ա փ ու զ յ ա ն  
Տելս. իմբ։ Հ. Մ ու բ ա դ յ ա ն  
Քարդմ. Զ ա վ ա խ ե ց ի  
Սըբակրիչ Խ. Ա յ գ ա դ յ ա ն


Հրատ № 288, Դլավլիսի լիազոր 4—453, պատվեր № 21, ոիբաժ 3000  
Հանձնված և արտադրության 1935 թ. հունվարի 1-ին  
Ստորադրված և ապադրելու 1936 թ. հունվարի 20-ին  
Քյուղներատի ապարան, Ցերեան, Նալբանդյան 11

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003320

50 կոչ.



БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА

А. Ф. РАДКО

ОРОШЕНИЕ  
ПЛОДОВОГО САДА

СЕЛЬХОЗГИЗ — ЗРИВАНЬ 1986